



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

3

ԳԼՈՒԽ Զ ՅԱՂԱԳՍ ԹԷ ՈՐՐՊԷՍ ԱՐԺԱՆ Է ԴԱՏԱԻՈՐԱՅՆ
ԼԻՆԵԼ Ի ՎԵՐԱՅ ԱՆԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ

Եւ դատաւորացն անկաշառս լինել արժան է, զի կաշառ գաշս իմաստնոց կուրացուցանէ, կորպէս զի համարձակ նստիցի յատեան դատաստանի, որպէս եւ գրեալ է, թէ կաշառ ի վերայ իրաւանց նա ոչ առնու. որ զայս արասցէ, նա մի՛ սասանեսցի յախտեան: Եւ Քրիստոս հրամայէ, թէ մի՛ աշառանօք, այլ ուղիղ եւ իմաստուն դատաստան արարէք:

Եւ արդ, ոչ է պարտ թիրել զդատաստանս արդար վասն կաշառոյ, զի մի՛ գայթակղեսցին տխմարք եւ երթիցեն առ այլազգիս ի դատաստան, այլ զի համարձակ լիցին ասել, որպէս եւ Քրիստոս ասէ՝ թէպէտ եւ դատիմ, բայց դատաստանն իմ արդար է: Եւ ոչ է պարտ զանձին միայն խնդրել զօգուտն, այլ զի բազումք հաւատասցեն ի նա եւ զդատաստանն ուղիղ արասցեն: Եւ թէպէտ յամենայնի գողորմութիւն յիշել պարտ է, այլ ի դատաստանի ոչ միայն առ աղքատս, այլ առ ամենեսեան միապէս, ըստ այնմ՝ մի՛ ողորմիր որբոյն եւ այրոյն ի դատաստանի, զի մի՛ պատճառ գայթակղութեան լիցի. դատ արարէք որբոյն եւ տուք իրաւունս այրոյն ի դատաստանի՝ ասացաւ: Եւ թէպէտ եւ դատաւորաց զայս պահելի է, սակայն ուսուցանեն զիրաքանչիրսն՝ մի՛ անգարմապէս առ միմեանս լինել, այլ կարողաց՝ ողորմութեամբ առ անկարսն խոնարհիլ: Մի՛ զամբաստանի կամ զդատախազի լուիցեն զբան եւ եթէ լուիցեն, ուսցին միայն, այլ մի՛ զվճիռ

միայն հասցէ, մինչեւ ի միասին կատարելապէս քննեցի:

Երկու կամ երեք վկայիք զվճիռն հասցէ հաւատարմօք, ըստ օրինացն: Եւ եթէ զի՞նչ հաւատարմութիւն է կամ ընդէ՞ր է երկու կամ երեք, ասասցուք ի միս ճատիդ, որ յառաջիկայդ գրելոց ենք:

Իսկ որոյ վկայ ոչ իցէ, երդմամբ միւսոյ կողմանն հասցի վճիռն: Այլ գերդմունս ոչ հրամայենք, եւ զի ոչ հրամայեցաւ, բայց սովորութեանցն, զոր ունին՝ անօրէն եւ անհրաման, կանոնս եւ ապաշխարութիւնս հրամայենք: Իսկ եթէ ո՞րպէս լիցի երդումն եւ ո՞րոց, ասասցի յիւրում ճատին, ոչ օրինադրելով այլ խրատելով:

Պարտ եւ պատշաճ իսկ է դատաւորաց ի դատաստանի երկու կամ երեք ունել արս փորձեալս, հաւատարիմս յամենայն կրօնս աստուածայինս, վկայեալս յամենայն բնակչացն, զի որպէս ոսոխացն հաւատարմանան բանք վկայիք, սոյնպէս եւ դատաւորացն առանց կարծեաց լինի դատաստանն վկայիք գայս:

Չայս սովորութիւն եւ Հռոմայեցիք կալան յառաջնումն՝ արս եւթանասուն եւ երկու ընտրեալս միշտ քննութեամբ պարապեցուցանել դատաստանի եւ այլոց, զի անվթար եւ յառաջ դատեալքն ի նոցանէ իցեն: Եւ եւթանասուն եւ երկու ըստ լեզուաց եւ ազգաց ընտրեն, իբր թէ զամենայն ազգաց իմաստութիւն ունել այնոքիք: Իսկ այժմ երկոտասան թուով, երկոտասանից առաքելոցն օրինակաւ, կացուցանեն զդատաւորս՝ ոչ միայն ընտրել զիրաւացին եւ անսխալ ունել զարդարն, այլ եւ բազմացն վկայութեամբ ճշգրտել զատեան դատաստանին: Իսկ Յոյնք երիս կացուցանեն զդատաւորս, նմանապէս եւ՝ Վիրք, որ են Վրացիք, ուսեալք ի նոցունց, ըստ թուոյ Երրորդութեանն եւ կամ ըստ վկայիցն թուոց: Չոր եւ մեք վկայենք եւ գնոյն պատուիրենք դատաւորաց մերոց եւ եպիսկոպոսաց մերոց, զի միշտ առ ինքեանս պահեսցեն ի հաւատարիմ քահանայից երկու կամ երեք՝ ոչ միայն վկայ, այլեւ եւ նոքօք կրթիլ եւ հմտանալ ի գիրս աստուածայինս, եւ ի գիրս դատաստանի եւ իմաստութեան, այլ եւ որսալ զբանս իմաստունս յամենայն ազգաց՝ յասել եւ ի լսել, ի դատել, եւ ի վճիռ, ի ճանապարհի եւ ի տան:

Այլ եւ յերկարոցի լինել ի դատաստանի, եւ աննախանձ, եւ անոխակալ, եւ անյիշաշար, զի նման Աստուծոյ դատաւոր է, պարտ է, որ զԱստուծոյ նմանութիւն բերել մարդասիրութեամբ յամենայն ժամանակի, եւս առաւել՝ ի ժամ

դատաստանին: Երկայնամիտք եւ ներողք լինիցին դատաւորք: Չի բազում անգամ անյայտ իրքն պատահին, մի՛ կարճամտեալ լուծցեն, այլ շտեմարանեալ պահեցցեն եւ պարապով տեսեալ՝ վերստին ատենի լուծցեն, որքան եւ իցէ առնուլ գնոյն:

Բանակրուութեան ոտխացն յատենի սաստեցեն, զի մի՛ ամբոյս խռովութեան լիցի յատենի անդ եւ պատճառ խափանման դատաստանին: Ուսցին միանգամայն դատախագքն՝ ոչ վասն վիճոյ գալ յատեան, այլ վշտակցաբար զարժանն առնուլ վճիռ: Ըստ կարգի խօս, երկաքանչիւրոցն լռութեամբ, տացեն միայն միոյն եւ սպա՛ միւսոյն, զի որ ճշմարիտն է՝ երեւեցի: Չգոյշ կացցէ դատաւորն ի սպասաւորաց իւրոց, զի մի՛ վարձ առցեն եւ գթիրն խօսեցցին, զի սովորութիւն կալան այնորիկ, որք գան ի դատաստանի, զի վարձու առցեն զոք ի սպասաւորաց դատաւորին, զի խօսեցցի ոչ զճշմարիտն վասն իւր: Արդ, պարտ է դատաւորին զճշմարիտն լսել եւ մի՛ երեսս առցէ ի սպասաւորաց իւրոց, պատրելով ի խօսից նոցա եւ արդար դատաստանն ոչ առնէ, քանզի երկնայինն դատաստան, որ է աստուածային, ոչ պատրի յումեքէ եւ ոչ ամաչէ, քանզի արդար է: Իսկ երկրաւոր դատաւորք պարտին այնմ նման լինել, եւ որք ոչ լիցին, մնայ նոցա դատաստան առ Աստուած: Մի՛ հպարտասցին դատաւորք ի վերայ մարդկան, քանզի մի է դատաւոր ամենեցուն՝ Աստուած, որպէս եւ գրեալ է: Թէ հպարտանայ դատաւոր ոք մտօք, գնտաւ ածէ զբանս Ամբակունայ մարգարէին՝ կոչել զԱստուած վրէժխնդիր անիրաւ դատաւորաց:

Պարտ է բանտ ունել դատաւորաց առ ի խրատել նովաւ գանիրաւսն, զի ի Քրիստոս հրամայէ, թէ՛ եւ դահիճն արկանէ ի բանտ: Չնոյն եւ դատախագաց խրատ տայ Քրիստոս՝ ի ճանապարհի տալ զհաշիւն եւ հաշտիլ ընդ միմեանս, զի մի՛ հակառակ ինչ պատահի:

Ոչ վայել է Քրիստոսի աշակերտաց խօսել սուտ, զի գստախօսին զհայրն գստանայ ասաց Քրիստոս, զի որ խօսի սուտ, յիւրոց անտի խօսի, զի սուտ է եւ հայրն նորա՝ սատանայ, եւ թէ կորուսանէ Տէր զայնոսիկ, ոյք խօսին սուտ. զայս Դաւիթ ասէ: Մի՛ ստեք միմեանց, եւ խօսեցցի իւրաքանչիւր ոք զճշմարտութիւն ընդ ընկերի իւրում: Եւ արդ, եթէ ստախօսին հայրն սատանայ է, ոչ է պարտ թողուլ զԱստուծոյ հայրութիւնն եւ լինել որդի սատանայի, զի ոչ է յօրինաց

Աստուծոյ որոգայթս դնել ընկերի սուտ բանիք առաջի դատաւորաց, եւ այնու ջանան իրաւացուցանել գդատաստանս իրեանց: Ջի գրեալ է իմաստունն Սողոմոն, թէ որ դնէ ընկերի իրում որոգայթ, անձամբ իրով լցցէ զնա, եւ Դաւիթ գնոյն ասէ՝ գուբն, գոր փորեաց եւ պեղեաց, անկցի ի նա, որ զնա փորեաց:

Մի՛ լիցի դատաւորաց սիրել զանիրաւութիւն, եւ մի՛ լիցի հաւատացելոց սիրել զյաղթութիւն անիրաւաբար առաջին դատաւորաց, զի թէ յաղթէ՝ զանձն զրկէ, եւ թէ յաղթի ի սուտ բանից՝ կրէ ամօթ ի մարդկանէ, իսկ առ Աստուած՝ պարզ երեսօք:

Մի՛ կացուցեն սուտ վկայս, զի զընկերին զինչսն յափշտակեն, զի գրեալ է յօրէնսն Աստուծոյ, թէ մի՛ ցանկար ընչից ընկերի քո: Արդ, եթէ ցանկալն պեղծ է, որչափ եւս առաւել յափշտակելն:

Մի՛ վարձէք ճարտարասանս եւ ճարտարախօսս ի դատաստանի, զի զչարն ի գլուխ հանիցէք:

Մի՛ կովուեալ նախատէք զմիմեանս յատենի:

Մի՛ կաշառէք գդատաւորս՝ յափշտակելով զինչս ընկերին՝ ախտացեալ զարծաթսիրութիւն, որ է արմատ ամենայն չարեաց: Լուարոք առաքելոյն Պօղոսի, որ ասէ՝ ընդէ՞ր ոչ դուք զրկիք եւ նեղիք, այլ զրկէք եւ նեղէք եւ այդ՝ զեղբարս եւս: Արդ, զարհուրեցին յառաքելական հրամանէն կանոնաց, որ վասն Տեառն գրեալ է, թէ լաւ է, որ հարաւ, քան թէ եհար, եւ բամբասեցաւ, քան թէ բամբասեաց:

Մի՛ վայրապար երդուիցեն յատենի, յառաջ քան զհրամայել դատաւորին, զի Աստուած ոչ հրամայէ երդնուլ, այլ զհտասցեն զասացեալն ի Տեառնէ, եթէ ընդ ամենայն դատարկ բանից համարս տալոց են յաւորն դատաստանի, եւ թէ՛ վասն այսր ամենայնի ածցէ Աստուած զքեզ ի դատաստան: Խորհեցի եւ զայն, զի լաւ իսկ է ի դատի աստ զյափշտակութիւն ընչիցն խնդութեամբ ընդունել եւ անվրէպ զանձն պահել, քան ազահել եւ յափշտակել եւ ոչ ինչ համարել եւ ի դատաստան անթիրելի մտանել դատաւորին ահեղի եւ երկնաւորի: Խրատեցին եւ յայսմ, զի աղօթիք ի Տեառնէ նախ՝ օգնականութիւն հայցեցեն եւ ասպա յատեան կայցեն

դատաստանի: Եւ երբ ի բարին աւարտի իրաւացի դատաստան նոցա, զայն Աստուծոյ համարեցին, քանզի նա ետ բերան եւ իմաստութիւն: Ապա թէ ընդ յանցանել իրիք Տէր ետ ի ձեռն անիրաւին զարդարն, զայն գոհութեամբ համբերեցեն, զի լաւագոյն հատուցմանն հասանիցեն եւ գնախանձ վրէժխնդրութեանն ի Տէր թողցեն, քանզի Աստուած է վրէժխնդիր:

ԳԼՈՒԽ Է ՅԱՂԱԳՍ ՎԿԱՅԻՑ, ԹԷ ՉԻՆՉ Է ՀԱԻԱՏԱՐՄՈՒԹԻՒՆՆ ՆՈՅԱ ԵՒ ԿԱՄ ԸՆԴԷՐ ԵՐԿՈՒ ԿԱՄ ԵՐԵՔ ԸՆՏՐԻՆ

Եւ հարկաւորապէս իսկ զվկայսն խնդրէ դատաստանն, զի զհակառակութիւն դատախազացն նոքօք լուծցէ դատաւորն, զի անհաւատալի է դատաւորացն մատնութիւն դատաստանաւորացն, քանզի թէ հնար գտանէին նոքա, զմիմեանս ի հոր մատնէին: Նաեւ ոսոխքն նոքօք առաւել, քան դատաւորան, շիջանին, յորժամ վկայքն շլինին վարձած կաշառօք, եւ դատաւորն առաւել հաւատարիմ գտանիցի նոքօք:

Իսկ հաւատարմութիւն վկայիցն, նախ, ի վարուցն ընտրին, զի ճշմարտախօսք իցեն եւ չիցեն կաշառօք եկեալ ի տեղի ատենին. եւ չիցեն ազգականք դատախազացն, եւ թէ իցեն ազգականք, եւ ի բազմաց վկայեալք իցեն հաւատարմութիւնք նոցա, հաւատարիմ լինել երկու եւ երեք, որպէս արեգակն եւ լուսին, զի հաւատարիմ վկայ է հաստատեալ յերկինս:

Երկրորդ՝ զի կրկին ալեօք պատուեալ իցեն, որովք առաւել պատիւ նոցա լինի:

Բայց պարտ է ցուցանել, թէ քանի անաց լինի վկայն: Չի երբ երեք տարոյ լինի տղայն՝ խօսի, եւ եւթ տարոյ յուսումն տան, եւ չորեքտասան տարոյ՝ սերմանելն, եւ քսան տարոյ՝ զինուորելն, եւ քսան եւ հինգ տարոյ քահանայ ձեռնադրի: Արդ, պարտ է զքահանայականն հասակ ընդունել ի վկայութիւն, զի թէ առաջի Աստուծոյ հաւատարիմ է կալ եւ վկայ լինել գործոց մարդկան բարոյ եւ չարի, եւս առաւել հաւատարիմ լիցի առաջի դատաւորաց:

Իսկ քսան տարոյ է հասակ որդեժնութեան՝ հաւատարիմ լիցի ի տուրեւառութիւն վաճառաց, զի թէ զանձն եւ զսերմն վաճառել կնոջ եւ գնել զկինն յամուսնութիւն հաւատարիմ է, հաւատարիմ լիցի ի գնել եւ ի ծախել:

Ապա թէ պատահի մին վկայն մանուկ լինել քսանհինգ տարոյ եւ միսն՝ ծեր, հաւատարիմ լիցին, ըստ այնմ՝ երիտասարդ ընդ ծերոյն, եւ ուղիղ են ճանապարհք նորա: Եւ թէ երկու կամ երեք պատահեցին մանուկ քսանհինգ տարոյ, ընկալեալ լիցին: Իսկ ըստ ազգաց կրօնից՝ ոչ է պարտ գանհաւատից վկայութիւն առնուլ ի վերայ քրիստոնէից, թէպէտ եւ արդարք իցեն եւ բազումք, որպէս եւ ոչ ընկալաւ գդիւացն Քրիստոս եւ ոչ ընդունեցաւ, թէպէտ եւ արդար վկայեցին, զի ունէին ընդ ճշմարիտն խառնեալ եւ գտուտն. նաեւ ոչ Պօղոս ընկալաւ, զի մի՛ միաբանութիւն ինչ կարծիցի. նաեւ՝ ոչ զհերձուածողաց, զի թէ Տեառն ոչ են ճշմարիտ վկայք, զի՛արդ մեր իցեն, բայց նոցայն ի վերայ իրեանց ընդունելի է, թէ պատահի այնպիսի ինչ հարկաւորութեամբ:

Իսկ զկանայս վկայ ոչ է ընդունելի, բայց արբանեակս վկայից, որպէս ի յարութեան Տեառն արբանեկեցին առաքելոցն չորք ի կանանցն, երկու՝ յառաքելոցն, եւ նոքա հաստատեալք զյարութիւն Տեառն՝ վկայք եղեն ճշմարիտ յարութեանն Տեառն: Այսպէս է. թէ պատահեցի իրիք վկայ լինել կանանց եւ ճշմարիտք իցեն վարուք, հաւատարիմ արանց զիրսն պատմեցեն եւ ինքեանք կրկին իցեն, հաւատարիմ լիցի վկայութիւն կանանց ի ձեռն արանց:

Բայց յատենի մի՛ կայցեն կանայքն, որպէս եւ ոչ է քահանայել նոցա, եւ ոչ նուիրել, եւ ոչ հնձան հարկանել, եւ ոչ ի խանութ նստել, եւ ոչ այրական հանդերձ ազանել ըստ կանոնաց, այսպէս ոչ դատել եւ ոչ վկայել, բայց գոր ցուցաք յառաջդ: Բայց մի՛ որ սպախտ առնել զվկայութիւն Տեառն կարծիցէ ինձ զկանանց, զի այլազգ Աստուծոյ վկայ լինելն է եւ այլազգ՝ մարդկան արբանեակ. թէ պատահին, որպէս պատահեցան բազումք, ի Տեառնէ ընկալեալք են եւ ի մարդկանէ՝ յաղագս Աստուծոյ, բայց ի մարդկայինս, յաղագս դիրագրգրութեան կանանց, երկբայելի է:

Այլ զկանանցն ի կանանց ընդունել արժան է, զի բազում անգամ պատահի իրաց նոցա մերձ ոչ լինել արանց: Եւ զի պարտին կրկին լինել՝ երկուք ընդ միոյ յամենայն տեղիս: Զի որպէս ամենայն հասակ՝ եթէ ծեր, եւ եթէ երիտասարդ, եւ եթէ մանուկ վկայեցէ զԱստուծոյ՝ ընդունելի է, որպէս Բերդեհէմի մանկունքն, եւ սուրբ Կիրակոս, եւ սուրբ Ստեփաննոս Նախավկայն եւ այլք բազումք, բայց սակայն ի մարդկայինս քսան եւ հինգ ամենիցն վկայութիւն, այլ եւս ծերացելոցն

ընդունելի է, զի Աստուած հայի ի սիրտս, իսկ մարդ՝ յերեսն եւ ի տեսն: Եւ եթէ ընդէ՞ր երկու կամ երեք ընտրեն. ոչ եթէ գայլ շատն խոտենք, այլ զի մի՛ պակաս իցէ, քան գայս, որպէս եւ գրեալ է, եթէ յերկուց եւ յերից վկայից հաստատի ամենայն բան: Ջի դիրին է մին վկային ախտի սուտ վկայել, իսկ երկու եւ երեքն՝ ոչ: Եւ զի ուցի դատաւորն, եթէ երկուց վկայիցն նման լիցի բանքն եւ անտի ճշմարտեսցի: Բայց պարտ է վկայիցն տեսանել եւ լսել եւ ապա վկայել, զի լաւ է տեսանելն, քան զլսելն, եւ վկայել ճշմարիտ առաջի մարդկան, եւ յԱստուծոյ առջեւ զպարգեսն: